ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ։

Յուն. 15-ին կայացաւ վիշեալ Ընկերութեան ընդհան. ժողովը Թիֆլիսի քաղաքային վարչութեան տան դահլիճում, նախագահութեամբ պ. Ս. Արծրունու։ Ժողովի զբաղումների առարկաներն էին՝ հաստատել կենդրոնի և դաւառական բաժինների նախահաշիւները 1889 թուի համար և ընտրել խորհրդի հերթով դուրս եկող հինգ անդամների փոխարէն՝ նորերին, որպէս նաև ընդհանուր ժողովի համար նոր նախագահ և քարտուղար։ Օգուտ քաղելով դէպքից, մենք կը ներկայացնենք ընթերցողներին այդ ընկերութեան դրութիւնը և գործունէութիւնը, որքան այդ երևաց ժողովի զեկուցած հաշիւներից։

Ընկերութիւնը ունի մի կենդրոնական վարչութիւն Թիֆլիսում, որը բղխում է ընդհանուր ժողովից՝ ընտրողական կանոնով։ Խորհուրդը բաղկացած է 9 անդամներից, որոնցից իւրաքանչիւրը ընտրւում է երկու տարով. բայց սկզբից արդէն գործը այնպէս է կանոնաւորուել, որ ամեն տարի միայն չորս կամ հինգ հոգու երկամեայ անդամութիւնն է լրանում, այնպէս որ ամեն տարի փոխւում է միայն կէսը։

Ընկերութիւնը ունի բաժիններ զանազան տեղերում. այդ բաժինները կազմում են տեղական վարչութիւններ, որոնք իրանց գործունէութեան համար պատասխանատու են կենդրոնական վարչութեան և, ուրեմն, Ընկերութեան ընդհանուր ժողովին, քանի որ այդ կենդրոնական վարչութիւնը կամ խորհուրդը բղխում է նորանից։ Այդպիսով Ընկերութեան Թիֆլիսի բաժինը կազմում է Ընկերութեան կենդրոնը և Ընկերութեան Թիֆլիսի բաժնի վարչութիւնը միացրած է ընկերութեան խորհուրդի հետ։ Մինչ այժմ այդ ընկերութիւնը ունի բաժիններ՝ Նոր-Նախիջևանում, Ախալցխայում, Գօրիում, Շուշիում և Երևանում։ Այս բաժինները իրանց նախահաշիւները ներկայացնում են Թիֆլիսի կենդրոնական վարչութեան։ Այդ բոլոր բաժինների անձեռնմխելի գումարները պահ են տրւած կենդրոնական վարչութեան, որը գումարների տոկոսները ամեն տարի ուղարկում է այն քաղաքի բաժնին, որին նոքա պատկանում են։

Ընկերութեան թէ կենդրոնի և թէ բաժինների եկամուտները կազմում են՝ անձեռնմխելի չայտնած գումարների տոկոսներից, անդամակցութեան 5 բուբլու տարեկան վճարներից, պատահական նէրներից, ներկայացումներից, պարահանդէսներից և այլն։

Ահա թէ առ 1-ն յունվարի կենդրոնը (Թիֆլիսում) ինչ յատուկ գումարներ ունէր, որոնց միմիայն տոկոսներով կարելի է շահուել ցոդուտ ընկերութեան նպատակների։

1) Անձեռնմխելի կոչուած գումարը տոկոսաբեր թղթերով կազմում էր առքի գնով 25.155 ր.,

անուանական արժէքով . . . . . 25.550 ր.
Ժողովում անձեռնմխելի չայտարարուեց ևս . . . . . 1.510 ր.

ուրեմն 1889 թ. անձեռնմխելի գումարն էր 27.060 ր.

2) Ճարտարապետ Համբարձում Կարապետեանի նուիրած գումարը. . . . . 1.001 ր. 73 կ.

3) Կարսի յատուկ գումարը. . . . . 5.104 ր. 05 կ.

Ընդամենը ուրեմն, կենդրոնական ընկերութիւնը 1889 թ. հաստատած գումարներ ունէր . . . . . 33.165 ր. 82 կ.

Բայց ահա մի քանի բացատրութիւններ այդ գումարների մասին։

1) Անձեռնմխելի գումարը 27.060 բուբլի գոյացած է Ընկերութեան մշտական անդամների վճարներից, պատահական նէրներից, ամեն տարուայ բիւջետի 5%-ներից և Մուրադեանի կտակած գումարից (7000 ր.), տիկին Եղիս. Տէր-Դաւթեանի (1000 ր) և պ. Սերեբրեկեանի (մօտ 250 ր.) նէրներից։

2) Երկրորդ գումարը մօտ 1000 ր. նուիրած է Ռուսիայի Տամբով քաղաքի ճարտարապետ պ. Կարապ., որպէս զի այդ գումարը հինգ տարի շահեցուի, իսկ յետոյ գոյացած գումարի տոկոսները գործադրուին համաձայն ընկ. նպատակներին ըստ իւր ցուցման։

3) Կարսի գումարի ծագումը այս է. Սովի ժամանակ (1879 թ.) Թիֆլիսում կազմեց Սովելոց մասնաժողով՝ ժողովարարութիւն անելու և գումարները սովելոց մէջ բաշխելու համար։ Ժողոված գումարներից մնաց մնացորդ ինչ որ 4000 բուբլի, որը մասնաժողովը չանձնեց Հայոց Բարեգործական Ընկերութեան, այն պայմանով, որ այդ գումարի տոկոսները գործածուին Կարսի հայոց երկսեռ դպրոցների վերայ։

Այդ բացատրութիւններից յետոյ, դիմենք ժողովին ներկայացրած նախահաշիւին 1889 թուականի համար։ Ահա մուտքի նախահաշիւը, որ հաստատեց Ընդհ. ժողովը և որի հետ զուգահեռաբար դնում ենք 1888 թուականի մուտքի թուանշանները։

ՄՈՒՏՔ.	1889 ըստ նախահաշիւ. Ր.	Կ.	1888 եղած է մուտք. Ր.	Կ.
1. 1888 թուականից մնացորդ	230	85	277	41
2. Անձեռնմխելի և ընթացիկ հաշիւ գումարների %%	1630	—	1631	84
3. Նուէրներից, պարահանդէսներից և այլն	1739	15	3787	58
4. Անդամավճարներից (200 անդ.)	1000	—	900	
	4600	—	6596	83
5. Կարապետեանի յատուկ գումարի տոկոսներ . . .	88	60		
6. Կարսի յատուկ գումարի %%	495	05		
	5183	65		

ԵԼՔ.	1889 ըստ նախահաշ. Ր.	Կ.	1888 եղ. Ր.	Կ.
1. Ուսումնարաններին.				
ա. Ընկերութեան Խարբերդի ուսումնարանին 1150 ր.				
բ. Նաւթուղի ուսումնար. 300 ր.	1450	—	916	17
2. Ուսանողներին համալսարաններում.				
ա. ամսական 30 ր. 1-ին 360 ր.				
բ. ամսական 10 ր. 2-ին 240 ր.	600	—	460	—
3. Աշակերտներին 5-ական ռուբլի ամսական թոշակով 17 հոգու (Թիֆլիսի այլ և այլ ուսումնարաններում)	1020	—	919	—
4. Ուսման իրաւունքի վճար 3 աշակերտի	278	—	281	—
5. Բարեգործական նպատակների համար՝ զանազան դիպուածներում և պատահական ծախք	495	50	438	30
6. Պետական 5%	81	50	80	63
7. Դիւան.				
ա. խորհրդի քարտուղարին 600 ր.				
բ. մանրածախք. 75	675	—	653	04
Գումար	4600	—	3748	14

Այդ 4600 ռուբլու գումարի մէջ հաշուելու է և 5% անձեռնմխելի՝ համաձայն կանոնադր. 29 յօդ. բ. կէտին.

8. Յատուկ գումար.				
ա. Կարապետեանինը	88	60	—	—
բ. Կարսինը	490	05		
մանրածախք.	5			
Համագումար	5183	65		

ԳՕՐԻԱՑ բաժնից ընդհան. ժողովին ներկայացրած նախահաշիւը հետևեալն էր, որ և հաստատուեց.

ՄՈՒՏՔ.

1. Մտադրեալ 72 անդամների վճարը	360 ր.
2. Անդրկովկասեան ուսուցչական դպրանոցից մի որդեդրի տարեկան վճարը	30
3. Ներկայացումից	50
4. Պատահական արդիւնք	60
	500

ԵԼՔ.

1. Մէկ որդեդրի պահպանութեան համար.	115 —
2. Գօրաւոր հայ ծխ. երկս. դպրոցների երկու սեռի չքաւոր աշակերտների ուսման տարեկան նպաստը	110
3. Չքաւոր հիւանդներին և կարօտներին	50
4. Եկամուտի 5%, որ պիտի մնայ անձեռնմխելի . .	25
5. Պատահական ծախք	50
6. Գօրաւոր ծխական դպրոցին նպաստ՝ կազմարարութեան արհեստանոցի սկզբնական կազմակերպութեան համար	50
7. Հայոց դպրոցների դրադարանի հարստացնելու համար յատկացրած է	25
	425

Շուշի քաղաքի Ընկերութեան բաժնից ներկայացուեց և հաստատուեց հետևեալ նախահաշիւը 1889 թ. համար.

ՄՈՒՏՔ.

1. Տոկոս ընկեր. յատուկ գումարներից	57
2. Անդամական վճար 50 հոգուց	250
3. Ներկայացումներից.	350
4. Նվիրաբերութիւններից	68
Գումար	725

ԵԼՔ.

1. Որդեդրի և որդեդրուհու յանուն Գէորգ Դ. կաթող.	84
2. Որդեդրուհու յանուն տ. Ս. Դօլուխան.	14
3. Նպաստ աղքատ և կարօտեալ ընտանիքներին. . .	60

4. Նպաստ չքաւոր աշակերտներին	40 ր.
5. Ընկերութեան բացուելիք գրատուն-ընթերցարանին .	465 75
6. Դիւանական ծախքեր և ծառայի	25
7. Ֆոնդ կազմելու համար (եկամուտի 5%)	36 25
Գումար	725

Երևանի տեղական բաժինը առաջարկած էր հետևեալ նախահաշիւը, որ և ընդունեց։

ՄՈՒՏՔ.

1. 80 անդամներից	400
2. Նախկին ընկերութիւնից ստանալիք.	270
3. Միանուագ նուէրներից	15
4. Թատրոնական ներկայաց., երեկոյթ. և դասախօսութիւններից	100
Գումար	785

ԵԼՔ.

1. Չքաւոր աշակերտներին երկու սեռի.	250
2. Հայոց գիւղական դպրոցների գրադարանների ընթերցան. գրքեր	50
3. Քաղաքիս հայոց հասարակաց ընթերցարանին . .	400
4. Ընկերութեան դրամագլխի օգտին.	45
5. Վարչութեան ծախքեր	40
Գումար	785

Որպէս ասացինք, Հայ. Բար. Ընկ. ունի բաժիններ նաև Նոր-Նախիջևանում և Ախալցխայում. ցաւում ենք, որ այդ բաժինների մասին տեղեկութիւն տալ անկարող ենք, քանի որ մինչ ընդ. ժողովի նիստի օրը նոքա իրանց նախահաշիւները դեռ չէին հասցրել։ Ախալցխայի բաժնի համար նկատենք, որ նորա և ընկերութեան կենդրոնի մէջ տարաձայնութիւններ կային, որոնք, բարեբաղդաբար, ինչպէս հաստատ տեղեկութիւն ունինք, արդէն վերացել են։

Ահա ուրեմն, մենք ներկայացրինք մեր ընթերցողներին հայոց Բարեգ. Ընկ. դրութեան լիակատար նկարագիրը, հիմնուած պաշտօնական հաշիւների վերայ։ Ինչ ունինք այժմ ասելու մեր կողմից։ Մի խոշոր բան։ Եւ այդ խոշոր բանը սա է, որ այդ, իւր կանոնադրութեամբ նշանաւոր, ընկերութիւնը, կենդրոնը, որը արդէն 8 տարի գոյութիւն ունի, այս րոպէին ունի միմիայն 180 անդամ։ Մի քաղաք, որպիսին է Թիֆլիսը, որը ունի 40—50,000 հայ բնակիչ և ուրեմն, ամենայն հաւանականութեամբ

24—30,000 քսան տարեկանից վեր հասակ ունեցող տղայ և կին մարդ, և, ամենաքիչը, 10,000 աշխատաւոր տղամարդիկ. այդքան հազար աշխատող և մտածող տղամարդկանցից 180 հոգի են գտնւել, որ տարեկան հինգ րուբլի տան Հայոց Բարեգործական ընկերութեան։ Որտեղ չը կայ բարեգործութեան պարտականութեան զգացում, այնտեղ դեռ ևս չը կայ օրինաւոր հասարակութիւն, նա դեռ ևս պարտաճանաչ հասարակութիւն չէ։ Ամեն բան թողած, մարդուս առաջին պարտքն է, իւր ընտանիքի ամենակարևորը հոգալուց յետոյ, բարեգործութեան մասնակցել։ Դա՝ քաղաքացու պարտականութիւնն է, և երկնային և երկրային օրէնքներով։ Բայց մեր այս խօսքերը դատարկ կը կորչեն, եթէ այս տողերի կարդացողները ա մ ե ն ի ց առաջ չը հետևեն մեր ասածներին։ Մեր մամուլը ամբողջապէս պէտք է միայն այս քարոզը առաջ տանի, պէտք է կ ա մ պ ա յ ն սարքել և ժողովուրդը կը հետևի մեզ։ Դորանով մամուլը գ ո ր ծ կատարած կը լինի, իսկ այդ ամենագլխաւորն է։

Հարկաւոր ենք համարում աւելցնել, որ Հայոց Բարեգոր. Ընկերութեան անդամ կարելի է գրւել վճարելով հինգ րուբլի—ընկերութեան գանձապահ պ. Ալ. Մէլիք-Ազարեանի մօտ, Թիֆլիս, Սօլօլակ, Ստարօ-Ինստիտուտսկայա փողոց, տուն Բայսօղըլովի. Ընկ. խորհուրդի քարտուղար պ. Աւ. Եզեկեանի մօտ՝ Թիֆլիս, Գանօվսկայա փող, տուն Թամամշեւի. ընկերութեան խորհրդի նախագահ պ. Ալ. Անանովի մօտ՝ Սօլօլակսկայա փող., փոխ-նախագահ պ. Ալ. Մանթաշեանի մօտ. Ընդհանուր ժողովի նախագահ պ. բժշկապետ Նասարդեանցի մօտ (Իւր հիւանդանոցում, Վօրօնցովի արձանի կողքին), պ. Ծատուրեանի լամպի մագազինում. և վերջապէս ոչ մի անդամ չի մերժիլ տեղ հասցնել թէ անդամակցական վճարը և թէ առհասարակ ամեն մի նւէր, սկսած մի կոպէկից։ «Մուրճ»-ի խմբագրատունը դոցա համար միշտ բաց է։